ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանը հայտնում է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը ապրիլի 14-ին, բժշկական քննության նպատակով, ուղևորվեց Լոնդոն:

Ապրիլի 20-ին Վեհափառ Հայրապետը Լոնդոնից մեկնեց Նյու Յորք՝ շարունակելու բժշկական քննությունը, նհամատեղելով այն նախապես ծրագրված հովվապետական այցելության հետ: Այցի ընթացքում Նորին Սուրբ Օծությունը նախագահելու է Հայ Առաքելական Եկեղեցու Ամերիկահայոց թեմի 100-ամյակի տոնակատարությանը:

Ուրախությամբ հայտնում ենք, որ որևէ մտահոգիչ հարց չկա Վեհափառ Հոր առողջության կապակցությամբ:

Շուտափույթ և կատարյալ առողջություն ենք ցանկանում մեր սիրեցյալ Վեհափառ Հայրապետին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ